

**Հայ-մոնղոլական դաշինքի խզումը  
(Պատճառներ և հետևանքներ)  
Արամ Յովհաննիսյան**

Հայ-մոնղոլական հարաբերությունների ուսումնասիրությունը Կիլիկիայի հայկական թագավորության պատմության կարևոր խնդիրներից մեկն է: Հայտնի է, որ հայկական թագավորության քաղաքական և տնտեսական կյանքում մեծ դերակատարում ունեին մոնղոլները, որոնք դեռևս ԺԳ դարի կեսերից զինական համագործակցության մեջ մտան հայերի հետ: Հայկական թագավորությունը դաշնակցելով մոնղոլներին՝ ներգրավվեց Եգիպտոսի սուլթանության դեմ պայքարում, որն ի վերջո ունեցավ ողբերգական հետևանքներ հայկական թագավորության համար: Մինչև օրս էլ արդի պատմագիտության մեջ բավարար կերպով ուսումնասիրված չեն հայ-մոնղոլական հարաբերությունները, իսկ դաշինքի խզման մասին ընդհանրապես ուսումնասիրություն գոյություն չունի: Մեր ներկա հետազոտության նպատակն է լրացնելու այդ բացը:

14-րդ դարի սկզբներին նոր տեղաշարժեր կատարվեցին Մերձավոր Արևելքի քաղաքական կյանքում, որոնք չափազանց աննպաստ էին նաև Կիլիկիայի հայկական թագավորության համար: Խնդիրը այն է, որ եվրոպական պետությունների միջև լարված հարաբերությունների հետևանքով գրեթե վերացան խաչակրաց նոր արշավանք կազմակերպելու հույսերը: Իրական օգնություն ցույց տալու փոխարեն՝ եվրոպական երկրների միապետերը և Հռոմի պապը ձգտում էին ավելի ընդարձակել Կիլիկիայում իրենց ազդեցության ոլորտները և նամակներ առաքելով ու ֆինանսական օժանդակություն ցուցաբերելով՝ լուծել իրենց հուզող քաղաքական ու տնտեսական խնդիրները: Բացի այդ այս շրջանում ավելի խորացավ Կիլիկիայի գլխավոր դաշնակից մոնղոլական իլխանության համընդհանուր ճգնաժամը: Նման պայմաններում մանլուքյան վտանգն ավելի սպառնալից դարձավ:

Կիլիկյան Հայաստանի և մոնղոլների դաշինքի խզումը կապված է Փիլարդուլի նենգ դավադրության հետ : 1307 թ, նոյեմբերի 17-ին (18) Կիլիկիայում մոնղոլական զորքերի հրամանատար Փիլարդուլն, որն մահմեդականություն էր ընդունել, քաջալերվելով երկրում տիրող դրությունից՝ ձեռնարկեց ուխտադրուժ դավադրություն: Հյուրասիրության պատրվակով իր մոտ՝ Անարգաբա քաղաք հրավիրեց Լևոն Դ արքային, Հեթում թագավորահորը և 40 ականավոր իշխանների, այդ թվում Օշին սպարապետին, Հեթումի եղբորորդի պարոն Թորոսին և կազմակերպեց նրանց

սպանությունը<sup>1</sup>. « Ի թուականիս Հայոց ՉԾՁ 1307 , ի նոյեմբերի ի ժե. 17 աւրն ապանաւ աւագ պարոն Հայոց Յեթում եւ գեղուղէ եւ ամենաբարի պատանին, եղբայր որդին իւր՝ Լևոն, որդի պարոն Թորոսի, ի ստորոտս Անարգաբու, յանաւրէն Պելարդոյե, եւ սուգ մեծ թողին ազգիս Հայոց»<sup>2</sup>: Պատմագիտության տեսանկյունից շատ հետաքրքիր է պարզաբանել, թե որն էր այն գլխավոր պատճառը, որի հետևանքով մոնղոլ զորավարը կատարեց այդ ոճրագործությունը և ինչպիսի հետևանքներ այն ունեցավ երկու պետությունների համար: Հայտնի փաստ է, որ Ղազան իլխանի և Կիլիկյան Հայաստանի ղեկավարության միջև միշտ էլ եղել են շատ ջերմ հարաբերություններ: Դա է վկայում նաև Յեթում պատմիչը, որը մեծ գովասանքի խոսքեր է ուղղում մոնղոլ իլխանի հասցեին: Ղազան իլխանի մահից հետո նոր իլխան դարձավ իր եղբայրը՝ Օլջեյթուն: Ճիշտ է, նոր միապետը սկզբնական շրջանում շարունակեց Կիլիկյան Հայաստանի հետ դաշնակցությունը, սակայն միաժամանակ սկսեց մերձենալ իսլամական ընտանիքների հետ և հասավ նրան, որ ստիպեց քրիստոնյաներին կրել տարբերակիչ նշաններ<sup>3</sup>: Յեթում պատմիչը վկայում է, որ նա սկզբնական շրջանում քրիստոնեության նկատմամբ հանդուրժողականություն ցուցաբերեց<sup>4</sup>, սակայն որոշ ժամանակ անց փոխեց իր վերաբերմունքը և հալածանքներ սկսեց նրանց դեմ<sup>5</sup>:

Վերադառնալով 1307թ. Փիլարդուի դավադրությանը՝ պետք է նշել, որ նրան ժամանակին հենց Ղազան իլխանն էր ուղարկել Կիլիկիայի հայկական թագավորություն մի բանակով՝ հավանաբար իր դաշնակիցներին մամլուքների հարձակումներից պաշտպանելու համար: Նախ տեսնենք, թե ինչ են մեզ հաղորդում այդ մասին միջնադարյան աղբյուրները; Հայկական աղբյուրներից Սամվել Անեցու երկը շարունակողներից մեկը Փիլարդուի արաքը պատճառաբանում է մոնղոլ զորապետի կողմից Կիլիկիան գրավելու ցանկությամբ.« եւ կամէր զԿիլիկիա յինքն յափշտակել»<sup>6</sup> : Թեև Սամվել Անեցու աշխատությունը բավականին լուրջ աշխատանք է, սակայն դժվար

<sup>1</sup> Սամվել Անեցի, Հաւաքմունք ի գրոց պատմագրաց, Վաղարշապատ, 1893, էջ 156, Սմբատ Սպարապետ, Պատմութիւն, Մոսկվա, 1856, էջ 119, Մանր ժամանակագրություններ, Կազմեց Վ. Հակոբյանը, Հ. Բ, Երևան, 1956 , էջ 88-89, Աբուլ-Ֆիդա, Յակուտ ալ-Համավի, Արաբական աղբյուրները Հայաստանի և հարևան երկրների մասին, Կազմեց՝ Հ. Նալբանդյանը, Երևան, 1965, էջ 245-246, ԺԴ դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, Կազմեց Լ. Խաչիկյանը, Երևան, 1950, էջ 55 : Այդ մասին տես նաև՝ Ս. Բոռնազյան, Կիլիկիայի հայկական թագավորության ներքին և միջազգային դրությունը XIII դարի վերջերին և XIV դարի սկզբին, Հայ ժողովրդի պատմություն, Հ. III, Գ. Միքայելյան, Կիլիկիայի հայկական պետության պատմություն, Երևան, 2007, էջ 442, Հայ ժողովրդի պատմություն, Հ. Գ, Երևան, 1976, էջ 767, Կ. Սուբաֆյան, Կիլիկիան կայսրությունների խաչմերուկում, Երևան, 2001, էջ 460, Ա. Սուքիասյան, Կիլիկիայի հայկական պետության և իրավունքի պատմություն, Երևան, 1978, էջ 87, Մ. Օրմանյան, Ազգապատում, Էջմիածին, 2001, Հ. Բ, սյուն 2081-2082, Ա. Հովհաննիսյան, Կիլիկիայի հայկական թագավորության և Եգիպտոսի սուլթանության հարաբերությունները 1250-1375 թթ, Երևան, 2008, էջ 141:

<sup>2</sup> Լ. Խաչիկյան, Հայերեն ձեռագրերի հիշատակարաններ ժԴ դարի, էջ 55:

<sup>3</sup> ԺԴ դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, էջ 53, 76, Հեթում պատմիչ, էջ 67; Այդ մասին տես նաև՝ Հ. Մանանդյան, Երկեր, Հ. Գ, Երևան, 1977. էջ 327, T. Boase, The Cilician Kingdom of Armenia, Edinburgh, 1978, p. 29:

<sup>4</sup> Յեթում պատմիչ, էջ 67:

<sup>5</sup> Յեթում պատմիչ, էջ 67, ԺԴ դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, էջ 46, 47, 48:

<sup>6</sup> Սամվել Անեցի, էջ 155-156:

է համաձայնվել նրա այդ մտքի հետ, քանի որ դժվար թե մոռնուի հրամանատարը ունենար իլխանության վերնախավի համաձայնությունը: Չմոռանանք նաև, որ մոռնուցները ապագայում ծրագրավորում էին նոր արշավանք կատարել դեպի Սիրիա, ուստի տրամաբանությունից զուրկ է վերը նշված տեսակետը: Ինչ վերաբերում է Սմբատ Սպարապետի պատմության շարունակողին, ապա պետք է նշել, որ նա էլ է հակիրճ ներկայացնում այդ դեպքը՝ հետազոտողներին դնելով ծանր կացության մեջ. « սպան Պիլարդուն գտղայ թագաւորն Լեւոն , եւ զհօր եղբայրն պարոն Յեթուն ` յԱնավարզոյ առջեւն » : Ինչպես նկատում ենք, թե Սամվել Անեցիին, և թե Սմբատ Սպարապետի պատմության շարունակողը հստակ չեն նշում, թե ինչու մոռնուի հրամանատարը նման արարք կատարեց: Այս դեպքերի մասին մեզ հաղորդումներ է տրամադրում նաև մանր ժամանակագիրներից մեկը, սակայն վերջինս գրեթե կրկնում է Սմբատ Սպարապետի պատմության շարունակողի հաղորդումը և բավարարվում է միայն նշելով հայոց արքայի և իշխանների սպանության փաստը. «Ընդ այսմ իսկ ժամանակիս ՌՅԷ ( 1307) եւ Յայոց թուին ( 202) 1307 Նուէմբեր ժէ 17 սպանաւ վերոյ ասացեալ պարոնս Յայոց Յեթուն եւ դեռաբոյս թագաւորն Յայոց Լեւոն, եղբօրորդի Թօրոսին...»<sup>7</sup>: Վերոնշյալ դեպքերի կապակցությամբ մեզ հաղորդումներ է տրամադրում նաև ԺԴ դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններից մեկը. « Ի ժամանակի յորում էր թուականս մեր 202. 1307, ի պակասել արդարութեանց եւ ի բազմանալ անօրէնութեանց մերոց, առաւել բազմացաւ բարկութիւն եւ սաստկացաւ չարութիւն ազգին նետողաց ի վերայ մեր՝ ազգիս քրիստոնէից, քանզի էլ տղայ հասակաւ այր մին ի Խորասանայ միականի, համանման նեռինն, որ գալոցն է, անուն նորայ Խարբանդա, որ թարգմանի իշու ծառայ...Սա բառնալ կամեցաւ զքրիստոնէութիւն աշխարհէս Յայոց եւ Վրաց, զոր խափանեաց տէր եւ ոչ կատարեցաւ չար խորհուրդ նորայ...»<sup>8</sup>: Փաստորեն հայկական աղբյուրների ընձեռած տեղեկությունները բավականին աղքատիկ են վերոնշյալ դեպքը խորությամբ ուսումնասիրելու համար: Խնդրի լուծման համար շահեկան կարող են լինել արևելյան, մասնավորապես՝ արաբական աղբյուրների հաղորդումները: Նախ այդ մասին խոսում է նշանավոր պատմիչ Աբուլ-Ֆիդան, որը հաստատում է մոռնուի զորավարի կատարած ոճրագործությունը, սակայն որևէ նոր տեղեկություն, որ կարող էր օգտակար լիներ մեզ համար, չի հրապարակում<sup>9</sup>: Ավելի ուշագրավ փաստեր է մեզ հայտնում Եգիպտոսի սուլթանի արքունի պատմիչը՝ Սաքրիզին. « Փիլարդուն մահմեդական էր դարձել և ջերմեռանդ էր կրոնի հարցերում: Նա եկավ Սիս և որոշեց այնտեղ մզկիթ կառուցել...Այս ծրագիրը դուր չեկավ Յեթումին. նա գրեց Խուդաբանդային, որ փիլարդուն մտադրվել է եգիպտացիների կողմն անցնել և Սսում

<sup>7</sup> Մանր ժամանակագրություններ, 3. Բ , էջ 188:

<sup>8</sup> ԺԴ դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, էջ 46:

<sup>9</sup> Արաբական աղբյուրները Յայաստանի և հարևան երկրների մասին, էջ 245-246:

մզկիթ կառուցել...ԵՎ որոշ ժամանակ անց Փիլարդուն մի խիստ նամակ է ստանում մոնղոլական իլխանության վերնախավից և դրա համար էլ վրեժխնդիր է լինում հայոց արքայից»<sup>10</sup> : Դժվար է համաձայնվել Մաքրիզիի այս հաղորդման հետ ևս: Խնդիրը այն է, որ այդ ժամանակ մոնղոլները արդեն մահմեդական էին, ուստի մոնղոլական արքունիքը քիչ հավանական է, որ լուրջ վերաբերվեր դրան: Բացի այդ, եթե նույնիսկ Փիլարդուն իրականում մզկիթ կառուցեր Սսում, դա դեռ չէր նշանակում, որ վերջինս ցանկանում է անցնել եգիպտացիների կողմը: Եթե իրականում նմանատիպ մզկիթ կառուցվեր, ապա հազիվ թե այն վրիպեր հայ մատենագիրների աչքից: Միջնադարյան ժամանակաշրջանի և ոչ մի հեղինակի մոտ մինչև օրս էլ չենք հանդիպել մի փաստի, որը խոսի Սսում մոնղոլ զորապետի կողմից մզկիթի կառուցման մասին: Ամեն դեպքում, մեր խորին հանոգմամբ, նման լուրջ գործողություն կատարելու համար անհրաժեշտ էր ավելի հիմնովին պատճառ ունենալ: Կարծում ենք , Եգիպտոսի սուլթանի արքունի պատմիչը պարզապես փորձում է թաքցնել մոնղոլ զորավարի արարքի բուն պատճառը: Իսկ դա նշանակում է, որ Եգիպտոսի սուլթանությանը այդքան էլ ձեռնտու չէր ՝ բացահայտումը: Այս հարցում մեզ կրկին օգնում են արաբական աղբյուրները, որոնք անգնահատելի « գանձ» են Միջնադարյան Հայաստանի և ընդհանրապես Մերձավոր Արևելքի երկրների պատմության հետազոտման համար:

Այսպես, 1307թ. դեպքերի մասին խոսում է նաև Աբուլ-Կասիմ Աբդալլա իբն Ալի ալ-Քաշանին , ըստ որի Փիլարդուն ստացել էր սուլթան Մուհամմեդ Խուդաբենդեհ Օլջայթուից մի զորաբաժնի հրամանատարությունը` Իրենչի Նուհի բանակում: Երբ այս վերջինը հիջրի 606 թվականին 1306 Ռումի երկրի զինվորական կառավարիչ նշանակվեց, Պիլարդուն իր զորամասով եկավ հաստատվելու Կիլիկիայում: Իր զինվորները մահմեդական էին, ինքն ևս լի էր նորադարձի եռանդով : Հայերը ախոռի էին վերածել Մամուն խալիֆի աղջկա` Այիշեի գերեզմանը, Սսի մոտ: Սրբապղծված այդ շիրիմը տեսնելով` Պիլարդուն և իր զինվորները զայրացան և ամեն տեսակ ծայրահեղությունների դիմեցին: Լևոնը գանգատվեց Օլջայթուին և տեղեկացրեց Եգիպտոսի սուլթանին`ալ-Մալիք ալ Նասր Կալավունին, թե անկարող է վճարել տարեկան հարկը: Ալ-Մալիք ալ Նասրը ուղարկեց Փիլարդուին, որպեսզի նա այդ առթիվ բացատրություն պահանջի հայոց թագավորից: Փիլարդուն էլ հրավիրեց Լևոնին, որ գա հանդիպի իրեն` իր վրանում: Թագավորը գնաց Հեթում Բ-ի և երեք պարոնների ընկերակցությամբ: Երբ նա Փիլարդուի առաջ եկավ, մոնղոլ հրամանատարը տեղից բարձրացավ և նրա գլուխը կտրեց սրի հարվածով: Լսելով իրենց զորավարի ծայնը` զինվորները հարձակվեցին Լևոնի հետևորդների վրա և սպանեցին նրանց<sup>11</sup>: Ինչպես

<sup>10</sup> Makrizi, Histoire des Sultans mamelouks, 1250-1308, trad. E. Quatremere, Vol. 2, Part 11, P. 620.

<sup>11</sup> Արաբական աղբյուրները, էջ 283, ծանոթագրություն 105:

նկատում ենք, թե հայկական, և թե օտար սկզբնաղբյուրների մեջ ամենաընդարձակը Աբուլ-Կասիմ իբն Ալի ալ-Քաշանիի տեղեկություններն են: Գիշտ է, այստեղ կան որոշ բացթողումներ, բայց ընդհանուր առմամբ արաբ հեղինակի հաղորդումները անգնահատելի են: Իսկ թերի է հաղորդման այն հատվածը, երբ պատմիչը խոսում է այն մասին, թե իբր սպանվել է արքան 3 պարոնների հետ միասին, այնինչ հայտնի է, որ սպանված իշխանների և ականավոր մարդկանց թիվը շատ ավելի էր: Կարևորը այս հաղորդումներից այն է, որ հեղինակը փորձում է տալ կատարված դեպքի պատճառը, այսինքն՝ ինչու կատարվեց ոճրագործությունը: Ամեն դեպքում, կարծում ենք, որ դժվար թե Այիշեի գերեզմանը ախոռի վերածելը միակ պատճառն էր, որի արդյունքում մոնղոլ զորավարը նման քայլի գնաց: Այս աշխատության մեջ էլ, Մաքրիզիի նմանությամբ հանդիպում ենք հետևյալ իրողությանը, այսինքն՝ փորձ է արվում թաքցնել դեպքերի իրական պատճառը: Խնդիրը այն է, որ Լևոն արքան մինչ այս դեպքը հստակ հարկ էր վճարում Եգիպտոսի սուլթանին, և չկար մի պատճառ, որի համար նա հրաժարվեր հարկատվությունից: Իսկ եթե անգամ հրաժարվեր, ապա նման պարագայում այդ փաստը պետք է հարուցեր ոչ թե Փիլարդուի, այլ Եգիպտոսի սուլթանության զայրույթը: Շատ հետաքրքիր է նաև ժամանակի նշանավոր հեղինակ Ռաշիդ-ադ-Դինի երկը շարունակողներից մեկի հաղորդումը: Ակնհայտ է, որ նա քաջատեղյակ է Լևոն արքայի, նրա հորեղբայր Յեթումի և շատ հայ իշխանների սպանության հանգամանքներին: Ըստ նրա՝ Փիլարդուն սկսել է ճնշել հայոց արքային՝ դրամ պահանջելով <sup>12</sup>: Այդ է վկայում նաև ժդ դարի հիշատակարանների հեղինակներից մեկը.« Առաքեաց ընդ ամենայն երկրի իշխանութեան իւրոյ դնել, նշան խայտառակութեան քրիստոնէից եւ հարկ առնուլ ըստ մարդաթուի Խ. 40 արծաթո մինչև Ժ . 10՝ ըստ կարի»<sup>13</sup>: Լևոն Դ-ն մի քանի անգամ բողոքել էր մոնղոլ իլխան Օլջեյթուին՝ ապարդյուն կերպով ձգտելով հեռացնել տալ Փիլարդուին զբաղեցրած պաշտոնից: Վերջինս իմանալով այդ մասին՝ որոշել է վրեժ լուծել: Շուտով ներկայանում է նաև առիթը: Մելիք-Նասր Մուհամմեդը Փիլարդուի մոտ դեսպան ուղարկեց, որպեսզի բանակցություններ վարի Կիլիկյան Հայաստանի կողմից մոնղոլներին և Եգիպտոսին հարկ վճարելու վերաբերյալ: Ամենայն հավանականությամբ, դեսպանը Փիլարդուին գաղտնի հաղորդել է Եգիպտոսի սուլթանի հետ Լևոն արքայի գաղտնի բանակցությունների մասին: Փիլարդուն էլ իր հերթին հայոց արքային կանչել է իր մոտ և կատարել ոճրագործությունը: Կարծում ենք , որ այս հաղորդումն ամենից իրատեսականն է և իրոք շատ հավանական է, որ մոնղոլ զորավարը այդ ոճրագործությունը կատարել է՝ ելնելով հավանաբար սեփական

<sup>12</sup> Ռաշիդ ադ-դինի շարունակող (հղումը ըստ Գ.Միքայելյանի, նշվ. աշխ., էջ 442) :

<sup>13</sup> ԺԴ դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, էջ 46:

շահերից: Չի բացառվում նաև այն հանգամանքը, որ միգուցե Փիլարդուհի և մամլուքների միջև եղել է որոշակի գաղտնի կապ:

Այժմ տեսնենք, թե ինչպիսի տեսակետներ են արտահայտում հետազոտողները: Այսպես, պատմաբան Միքայել Չամչյանը նշում է, որ հայ իշխաններից ոմանք, որոնք դեմ էին Սսի 1307թ. ժողովի որոշմանը, Կիլիկյան Հայաստանում տեղավորված մոնղոլական զորքերի հրամանատարին դրդել են , որ սպանի Լևոն արքային և նրա հորեղբայր Հեթումին <sup>14</sup>: Դժվար է համաձայնել այս տեսակետի հետ, քանի որ Սսի 1307թ. ժողովում ընդունած որոշումները ոչ մի ձևով չէին հակասում մոնղոլական իլխանության շահերին: Դեռ ավելին, այդ որոշման ընդունումով հայերը նպատակ ունեին կատարել քրիստոնյա արևմուտքի պահանջը, օգնություն ստանալ և միասնական ճակատ ստեղծել ընդդեմ Եգիպտոսի սուլթանության: Պարզապես չի կարելի բացառել այն հանգամանքը, որ միգուցե Փիլարդուն գաղտնի համագործակցել է Եգիպտոսի սուլթանության հետ և 1307թ. Սսի ժողովից հետո նրանց դրդմամբ էլ կատարել այդ ոճրագործությունը: Այլապես, եթե Մ.Չամչյանի տեսակետը ընդունենք, ապա ոճրագործությունից հետո այդ իշխանները և ժողովրդի մեծ մասը պետք է ընդունեին Փիլարդուհի և նրա կատարած քայլը, բայց ինչպես գիտենք վերջինս արտաքսվեց երկրից:

Այս խնդրին անդրադարձել է նաև Ալեքսեյ Սուքիասյանը, որը նշում է թե իբր 1307թ. Փիլարդուհի կատարած նենգ դավադրությունը թելադրված էր թուրք-սելջուկների կողմից <sup>15</sup> : Ցավոք գիտնականը բավարարվում է միայն այսքանով և ոչ մի աղբյուրի հաղորդմամբ չի հիմնավորում իր տեսակետը:

Այս խնդրի մասին խոսում է նաև Սարգիս Բոռնազյանը՝ նշելով, որ հայ և օտար աղբյուրների տվյալներից կարելի է եզրակացնել, թե իբր Փիլարդուն ցանկացել է իր հսկողության տակ վերցնել Կիլիկիայի հայկական թագավորության արտաքին քաղաքականությունը և ստիպել վերջինիս հրաժարվել Եգիպտոսին հարկ վճարելուց: Այնուհետև հեղինակը հղում է կատարում Մ. Օրմանյանից, որը բնականաբար աղբյուր համարել չի կարելի <sup>16</sup>: Շարունակելով իր միտքը՝ հեղինակը ավելացնում է, որ մոնղոլ զորավարը ցանկանում էր Կիլիկիայի կողմից ավելացնել մոնղոլներին տրվող հարկի քանակը <sup>17</sup>: Նախ ինչպես գիտենք, դեռևս 13-րդ դարի երկրորդ կեսից Կիլիկիայի հայկական թագավորության արտաքին քաղաքականությունը որոշակիորեն կախված էր մոնղոլական իլխանությունից: ԵՎ Կիլիկյան Հայաստանը մի շարք պատերազմներից չկարողացավ խուսափել հենց այն պատճառով, որ հայկական թագավորության

<sup>14</sup> Մ.Չամչյան, Հայոց Պատմություն, 3. Գ, Երևան, 1984, էջ 311:

<sup>15</sup> Ա.Սուքիասյան, նշվ. աշխ., էջ 93 :

<sup>16</sup> Հայ ժողովրդի պատմություն, 3. Գ, էջ 766-767:

<sup>17</sup> Նույն տեղում:

վերնախավը արտաքին քաղաքական հարցերում անկախ չէր: Ինչ վերաբերում է մոնղոլներին տրվող հարկի քանակի ավելացմանը, ապա պետք է նշել, որ այստեղ ևս կասկածելի բան կա: Խնդիրն այն է, որ մոնղոլական իլխանությունը, որն վաղուց ի վեր գտնվում էր հայկական թագավորության հետ դաշնակցային հարաբերությունների մեջ դժվար թե նման քայլի գնար, որովհետև ինչպես նախկինում, այնպես էլ ապագայում Կիլիկյան Չայաստանի դաշնակիցները պատրաստվում էին նոր արշավանքներ ձեռնարկելու դեպի Սիրիա և Եգիպտոս և դուրս գալու Միջերկրական ծովի ափ: Ջրկվել Կիլիկիայի նման դաշնակցի ծառայությունից, որն ուներ չաձազանց հաջող աշխարագրական դիրք դժվար է պատկերացնել: ԵՎ մանավանդ՝ կորցնելով Կիլիկյան Չայաստանը՝ նրանք ընդհանրապես հարցականի տակ կարող էին դնել մոնղոլական իլխանության հետագա արշավանքների ծրագրերը: Չետագա տարիներին էլ կյանքը ցույց տվեց, որ կորցնելով Կիլիկիայի հայկական թագավորության հետ դաշնակցությունը, մոնղոլները կորցրեցին իրենց բոլոր հնարավորությունները դեպի Սիրիա և Եգիպտոս արշավանքներ կատարելու: Այլ հարց է, որ այդ արարքը բխել է մոնղոլ զորավարի անձնական նախաձեռնությունից և հետապնդել ինչ-ինչ նպատակներ:

Այս իրադարձության մասին խոսում է նաև Թ. Բոեյզը, ըստ որի 1307թ. սպանության հիմքում ընկած էր այն հանգամանքը, որ մոնղոլները փոխել էին իրենց մոտեցումները քրիստոնյաների հանդեպ<sup>18</sup>, իսկ ահա Կ. Մութաֆյանը ենթադրում է, որ այդ միջադեպը կարելի է դիտել որպես Կիլիկիայի անկախ տերը դառնալ ձգտող Փիլարդուի մտադրություն<sup>19</sup>: Չետաքրքրությունից զուրկ չէ նաև Կիլիկյան Չայաստանի հայտնի մասնագետ Գ.Միքայելյանի կարծիքը: Վերջինս նշում է, որ Իրանի մոնղոլների կողմից իսլամ ընդունելուց և Սիրիայում նրանց պարտությունից հետո Չուլավյանների վերաբերմունքը Կիլիկիայի հայկական թագավորության նկատմամբ աստիճանաբար թուլացավ: Կիլիկիայի նկատմամբ Փիլարդուի թշնամական քաղաքականությունը հավանություն գտավ մոնղոլական վերնախավի մեջ, ուստի և սկզբում նա արդարացվեց<sup>20</sup>: Վերջում կցանկանայինք անդրադառնալ Լ. Տեր-Պետրոսյանի տեսակետին, ով բավականին խորությամբ ուսումնասիրել է նշված խնդիրը: Չեղինակը նշում է, որ ոճիրը ընդամենը ծայրամասային մոնղոլ պաշտոնյայի ձեռնարկած ինքնագլուխ քայլ էր<sup>21</sup>:

Այսպիսով, տեղեկանալով հայ և օտար աղբյուրների ընձեռած տեղեկություններին և ժամանակակից գիտական գրականությանը՝ գալիս ենք այն

<sup>18</sup> T. Boase, The Cilician Kingdom of Armenia, Edinburgh, 1978, p. 29.

<sup>19</sup> Կ. Մութաֆյան, նշվ. Աշխ., էջ 461;

<sup>20</sup> Գ.Միքայելյան, , նշվ. Աշխ., էջ 461;

<sup>21</sup> Լ. Տեր-Պետրոսյան, Խաչակիրները և հայերը, Չ. Բ, Երևան, 2007, էջ 374;

եզրակացության, որ Փիլարդուի դավադրությունը չէր լինի, եթե մոնղոլական արքունիքը ունենար նախկին հզորությունը, որովհետև նման պարագայում իլխանության բարձրագույն ղեկավարության համար Կիլիկիայի հայկական թագավորության աշխարագրական դիրքը շատ օգտակար էր իր դաշնակիցների համար: Այստեղ հարց է առաջանում, արդյոք իլխանության ղեկավարությունը տվել է նման հանձնարարություն Փիլարդուին: Պետք է նշել, որ շատ հավանական է, որ նման հանձնարարական եղած չլիներ, սակայն մոնղոլ հրամանատարը, տեսնելով իլխանության վերջին շրջանի քրիստոնյաների հանդեպ քաղաքականության կտրուկ շրջադարձը, փորձեց ինքնագլուխ գործել: Չի բացառվում, որ այս հարցում եղած լինի նաև երրորդ կողմի դերակատարումը : Խոսքը վերաբերում է Եգիպտոսի սուլթանությանը, որը կարող էր դրդել մոնղոլ հրամանատարին նման դավադրության՝ քաջ գիտակցելով, որ հայ-մոնղոլական դաշինքի խզումը շատ օգտակար կլիներ իրենց համար:

Իսկ ինչ հետևանքներ ունեցավ հայ մոնղոլական դաշինքի խզումը երկու կողմերի համար: Առաջին հերթին պետք է նշել, որ այդ դաշինքի խզումը բացասական ազդեցություն ունեցավ երկու պետությունների համար, քանի որ թշնամական տերություններին ավելի ձեռնտու էր առանձին-առանձին պայքարել նրանց դեմ: Իրոք Կիլիկյան Չայաստանը մնաց մեն-մենակ՝ շրջապատված մահմեդական պետություններով: Գիշտ է, այս ժամանակաշրջանում դեռևս իր գոյությունը պահպանում էր նաև Կիպրոսի թագավորությունը, որն առերես իրեն համարում էր հայկական թագավորության բարեկամը, սակայն հետագա տարիները ցույց տվեցին, որ նրանց բարեկամությունը կեղծ է, իսկ ուժերն էլ բավարար չեն, որպեսզի կարողանան պայքարել այնպիսի հզոր պետությունների դեմ, ինչպիսիք էին այդ պահին Եգիպտոսի սուլթանությունը և թուրք-կարամանները: Հավանաբար այդ պատճառով էլ հայկական թագավորությունը, օգնություն ստանալու հարցում, հատկապես 14-րդ դարից սկսած, էլ ավելի ուժեղացրեց բանակցությունները Հռոմի պապի և արևմտաեվրոպական երկրների միապետերի դեմ հետ: Արդյունքում՝ էլ ավելի սրվեցին Կիլիկիայի հայկական թագավորության հարաբերությունները Եգիպտոսի սուլթանության և նրանց դաշնակիցների հետ, որի հետևանքով էլ կործանվեց հայկական թագավորությունը: Իսկ ինչ հետևանքներ ունեցավ 1307թ. դավադրությունը մոնղոլական իլխանության համար: Բնականաբար ոչ մի դրական ազդեցություն, քանի որ մոնղոլական իլխանությունը, որն արդեն չուներ իր նախկին հզորությունը՝ կորցրեց մի կարևոր դաշնակցի: Իսկ հայկական թագավորությունը քիչ օգուտ չէր տալիս նրանց Եգիպտոսի մամլուքների դեմ պատերազմում: Դրա վառ վկայությունն է այն փաստը, որ 1312թ. մոնղոլական իլխանությունը առանց Կիլիկյան Չայաստանի մասնակցության կազմակերպեց



արշավանք դեպի Սիրիա, որն ավարտվեց խայտառակ պարտությամբ<sup>22</sup>: Դրանից հետո էլ, մոնղոլական իլխանությունը աստիճանաբար բռնեց մարման ուղին, թուլացավ և վերջնականապես անկում ապրեց 1353թ. :

Հանդես Ամսօրեայի , Վիեննա

---

<sup>22</sup> Ա.Յովհաննիսյան, ԳԶՎ. աշխ, էջ 209: